

դաստիարակչական մի գրուածք է, որ հեղինակը յարմարեցրել է ժողովրդի ընթերցանութեան համար՝ կեանքից վերցրած բազմաթիւ օրինակներով տարրական դարձնելով նիւթը, կարելի է ասել, որ պ. Զիլինգարեանին յաջողուել է այդ Գրքը կը մատչելի է ժողովուրդին և դիւրամբողջելի. միայն այն հատուածը, ուր խօսուած է «ժառանգականութիւնից առջացած ստախօսութեան» մասին, լաւ է բացատրուած: Պ. Զիլինգարեանի հայերէնը պարզ ու հասկանալի է, միայն զերծ է անկանոնութիւններից. «Մի փոքր վերեւում ասացի, թէ ստախօսութիւնը ժառանգական է. տղան իրա հետ աշխարհ է բերում և օրօրոցից սկսած հետզհետէ շատանում, մեծանում է»: (էջ 15) «Այսպիսով առաջ է դալիս փոքրիկ ստախօսներ, որոնք ...» (էջ 15) «Եւհարկէ սա շատ սխալ վարմունք է, այլ պէտք է համբերութիւն ունենալ, ասածները տեղն ու տեղը հանգիստ կերպով աշխատել, ուղիղ, կրկնել տալ և սովորեցնել» (էջ 22): «Ուրեմն, եթէ այդպէս հաշուենք, նշանակում է կառքերը պէտք է այս ինչ փողոցից մինչև մայր եկեղեցին հասնէր»: (էջ. 23) «Ես հաւատացած եմ, որ դու ինձ սուտ բան չես ասէ»: ... (էջ 24): «Աւելի ուշք է դարձնելու նպատակով ստեր հնարող և սուտ խօսող երեխաների վրայ» (էջ 25) և այլն:

Իրենց փոքրիկ սիրելիների բարոյական կրթութեան մասին մտածող մայրերին՝ խորհուրդ ենք տալիս կարգաւ այս գրքիչ:

6. Մ. ԳՕՐԿԻՅ. Մակար Զուղրա. Թարգմ. Սիմ. Բաբիեան հրատ. Յ. Դաւթեանի, Թիֆլիզ, 1903. 30 էջ
գ. 10 կոպ.

Մակար Զուղրան տաղանդաւոր Գօրկիյի փոքրիկ, բայց շնորհալի երկերից մէկն է. նիւթը վերցրած է գնչուների կեանքից: Մակար Զուղրան 58 տարեկան ծեր գնչու է, որ պատմում է բոլորը մի աներեղութեամբ. սկզբում մարդկային կեանքի և գոյութեան մասին փիլիսոփայութիւններ անելով՝ բաւականին յոռեան (պետիմիտիկական) կարծիքներ է յայտնում. «Եթե զելի են նրանք, այդ քո մնաղիկ (?)» Կուտակուել են իրար վրայ և ճնշում են միմեանց, իսկ տեղ աշխարհիս վրայ՝ ահա՛ ո՛րքան կայ, —նա լայն տարածեց(?) ձեռքը դաշտի վրայ (?):

—Եւ միշտ աշխատում են: Ինչո՞ւ ո՞ւմ համար: Ոչ որ չգիտէ: Տեսնում ես, ինչպէս մարդը հերկում է, և մտածում ես. ահա՛ նա քրտինքի հետ կաթիլ-կաթիլ սպառում է իր յոժը հողի վրայ, իսկ յետոյ կը պառկի նրա մէջ և կը փտի այնտեղ: Ոչինչ էի մնում նրանից, ոչինչ էի տեսնում նա իր դաշտից և մեռնում է, ինչպէս ծնունեց—յիմար: Ի՞նչ է, միթէ նա ծնունեց նրա համար, որ քչփորէ հողը և մեռնէ, չկարողանալով նոյն իսկ գերեզման փորել իր համար: Տեղեկութիւն ունի՞ նա ազատութեան մասին: Դաշտային լայնութիւնն ըմբռնելի՞ է նրա համար: Ծովային ալիքի զրոյցը կուրախացնէ՞ նրա սիրտը: Ի՞նչ, նա ստրուկ էր—հենց որ ծնունեց, ողջ կեանքում էլ ստրուկ մնաց, ահա՛ այդ է բոլորը. ի՞նչ կարող է նա անել իրան (?):.. միայն խեղդամահ լինել, եթէ մի քիչ խելօքանայա:—(էջ 5—6):

Յետոյ շուգրան պատմում է քաջ գնչու Լոյկո Ջօբարի և գնչուհի Բադդայի ողբերգական պատմութիւնը: Ամբողջը պատմուած է գեղարուեստօրէն և կարդացւում է հետաքրքրութեամբ: Թարգմանութեան լեզուն առհասարակ պարզ բայց խրթնութիւններ չառ կան, հայադրած էէ, բնագրի աղբեցութիւնը նկատելի է: Այսպիսի անկանոնութիւններ կան Ռ՝վ է շիննէ քնգ (?), այդպիսի հնչուն և զգայուն ջութակա: (էջ 14) «Այո՛, այսպէս ահա մի գիշեր նստած ենք մենք և լսում ենք՝ երաժշտութիւն է լողում(?) դաշտով: (?) Լաւ երաժշտութիւն. ջղերում արհիւն էր վառում նրանից և կանչում էր նա (?) մի տեղ: Ջգում էինք բոլորս այդ երաժշտութիւնից մի այնպիսի բան ուզեցինք, (?) որից յետոյ էլ ապրել պէտք չլինէր, կամ եթէ ապրել (?) իբրեւ թագաւոր ամբողջ երկրի վրա:» (էջ 13) Արդեօք ընթերցողն ի՞նչ հասկացաւ:

7. Մ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ. Էսքիզներ. Բագու 1903. 30 էջ.

գ. 5 կոպ.:

Երեսուն էջից բաղկացած այս գրքիկի մէջ չորս վիպական պատկեր կայ ամփոփուած. 1) «Երեք կոպէկ» 2) «Ետուրալակը» 3) «Գարեջրատանը» և 4) «Սև քաղաքում»: Չորսն էլ համարեա նոյն նիւթն են պարունակում— աղքատ և թշուառ մարդկանց կացութեան նկարագիրը: Նոր ասպարէզ եկած անփափոք հեղինակը երեւի ուղում է ուսու ժամանակակից վիպագ-